ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՍՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ԱՓԻԶԲԵԿՅԱՆ

Հասուն սոցիալիզմի ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության համակողմանի զարգացումը հանգեցնում է սոցիալիստական մրցության ձևերի որակական փոփոխման և կատարելագործման։ Ինչպես նշել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը, «Երկրի էկոնոմիկան ինտենսիվացման ռելսերի վրա փոխադրելու պայմաններում նորովի է ծառանում Լենինի առաջ քաշած հարցը, թե ինչպես կազմակերպել մրցությունը։ Եվ հարկավոր է նորովի, թարմ հայացքով նայել այդ կարևորագույն գործի բազմաթիվ կողմերի վրա, հրաժարվել հնացած մոտեցումներից ու մեթոդներից»[1]։

1950-ական թվականների վերջերին մեր երկրում լայն տարածում ստացավ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժումը։ Վերջինս մեծ թափ ստացավ նաև ՀՍՍՀ-ում։ Արդեն 1960-ական թվականների կեսերին հանրապետությունում կոմունիստական աշխատանքի հարվածային կոչման համար պայքարում էր 110 հազար մարդ, իսկ կոմունիստական աշխատանքի բրիգադի կոչման համար՝ 8400 բրիգադ, որոնցից համապատասխանաբար 20 հազարը և 2400-ը արժանացան այդ կոչմանը։ Հանդես եկան կոմունիստական աշխատանքի առաջին ձեռնարկությունները՝ Երևանի քիմիական գործարանը, տրիկոտաժի № 1 ֆաբրիկան, Կիրովականի տպարանը և այլն[2]։

Սոցիալիստական մրցության հետագա կատարելագործման և աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժումը հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման հզոր միջոց դարձնելու գործում մեծ նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1971 թ. օգոստոսի 31-ի «Սոցիալիստական մրցության կազմակերպման հետագա բարելավման մասին» որոշումը, որտեղ արտացոլված էին զարգացած սոցիալիզմի պայմաններում սոցիալիստական մրցության հետագա կատարելագործման ուղիները և բացահայտված այդ բնագավառում տեղ գտած թերությունները[3]։ Առաջնորդվելով այս որոշմամբ, 1971 թ. հոկտեմբերին ՀԿԿ Կենտկոմի պլենումը քննարկեց հանրապետությունում սոցիալիստական մրցության հետագա զարգացման հարցերը։ Պլենումն ընդգծեց այդ բնագավառում ձեռք բերված հաջողությունները և խնդիր դրեց կարճ ժամանակամիջոցում կատարելագործել սոցիալիստական մրցության ձևերը, նրա մեջ առավել լայնորեն ներգրավելով աշխատավոր մասսաներին։ Ղեկավարվելով պլենումի որոշումներով, հանրապետության կուսակցական և հասարակական կազմակերպությունները մեծ աշխատանք կատարեցին սոցիալիստական մրցության հետագա ծավալման և նրա մեջ աշխատավորների համընդհանուր ընդգրկման ուղղությամբ։ Այս ամենի

---

1 *Մ. Ս. Գորբաչով, Ժողովրդի կենդանի ստեղծագործությունը։ Զեկուցում «Զարգացած սոցիալիզմի կատարելագործումը և կուսակցության դաղափարախոսական աշխատանքը ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թվականի հունիսյան պլենումի որոշումների լույսով» համամիութենական գիտագործնական կոնֆերանսում 1984 թվականի դեկտեմբերի 10-ին, Երևան, 1985, էջ 32։*

2 *Հայաստանի արհեստակցական միությունների 12-րդ համագումարի նյութերից, ՀԱՄԽ-ի ընթացիկ արխիվ, ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ, ֆ. 35, ց. 92, դ. 44, թ. 44։*

3 «КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК», т. 10, М., 1972, с. 448—497.

հետևանքով 1980-ական թվականների սկիզբներին ՀՍՍՀ-ում սոցիալիստական մրցության մասնակիցների քանակը հասավ 1006,5 հազար մարդու, որոնից 515 հազարը ընդգրկված էր աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժման մեջ։ Վերջիններից 165 հազարը արժանացավ կոմունիստական աշխատանքի հարվածային կոչման։ Հայաստանում կոմունիստական աշխատանքի բրիգադի կոչման համար պայքարում էր 17,4 հազար բրիգադ, իսկ կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար՝ 1177 ձեռնարկություն, որոնցից համապատասխանաբար 7,1 հազարը և 93-ը արժանացան այդ կոչմանը[4]։

Այս ամենի հետ մեկտեղ սոցիալիստական մրցության կազմակերպման գործում դեռևս գոյություն ունեին թերություններ։ Որոշ ձեռնարկություններում այն ձևական բնույթ էր կրում, առավել ուշադրություն էր դարձվում մրցության քանակական և ոչ թե որակական կողմին, արհեստականորեն ուռճացվում էր նրա մեջ ընդգրկվածների թվաքանակը։ Հաճախ մրցության արդյունքները մանրակրկիտ վերլուծության չէին ենթարկում, դրանց ամփոփման ժամանակ հանդես էր բերվում ավելորդ շտապողականություն և այլն։ Սոցիալիստական մրցության կատարելագործումը և նրանում տեղ գտած թերությունների վերացումը միշտ էլ գտնվել են հանրապետության կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ ՀԿԿ Կենտկոմը, քաղկոմները և շրջկոմները մեծ աշխատանք էին կատարում վերը նշված թերությունների վերացման և աշխատավորների հայրենասիրական նախաձեռնություններին մասսայական բնույթ տալու գործում։ Այս առումով հատկանշական է արտադրանքի որակի բարձրացման համար ծավալված նախաձեռնությունների լայն տարածումը։ Ինչպես հայտնի է, 1970-ական թվականների կեսերին կուսակցությունն արտադրանքի որակի բարձրացման կուրս վերցրեց։ Վերջինս ամրապնդվեց ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներով, որտեղ 10-րդ հնգամյակը հայտարարվեց որակի և արդյունավետության հնգամյակ։ Համագումարի որոշումների լույսի ներքո Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում ծնվեցին և լայն թափ ստացան մի շարք հայրենասիրական նախաձեռնություններ՝ «Աշխատել առանց ետ մնացողների, արդյունավետ, բարձր որակով», «Արդյունավետության և որակի հնգամյակին՝ բանվորական երաշխիք», «Բանվորական նախաձեռնությանը ինժեներական աջակցություն», «Յուրաքանչյուրի աշխատանքի բարձր որակից դեպի կոլեկտիվի աշխատանքի բարձր արդյունավետություն», «Հայաստանի ապրանքներին գերազանց որակ» և այլն։ «Հայաստանի ապրանքներին գերազանց որակ» նախաձեռնությամբ հանդես եկան կարի «Գարուն» և կոշիկի «Մասիս» արտադրական միավորումները[5]։ Կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեն հավանություն տվեց այդ նախաձեռնությանը և մայրաքաղաքի կուսակցական ու հասարակական կազմակերպություններին առաջարկեց դրան տալ մասսայական և արդյունավետ բնույթ։ Նշված շարժումը լայն տարածում ստացավ, երբ նրա մեջ ներգրավվեցին հանրապետության մեքենաշինարարները, սարքաշինարարները, քիմիական և արդյունաբերության այլ ճյուղերի աշխատավորները։ Սրա հետևանքով, ինչպես նշվեց ՀԿԿ XXVII համագումարում, 10-րդ հնգամյակի տարիներին որակի բարձրագույն կարգի արտադրանքի արտադրության ծավալը հանրապետությունում մեծացավ ավելի քան 4-անգամ[6]։ Այս բնագավառում լավագույն արդյունքների հասած ձեռնարկությունների թվում համագումարում նշվեցին Կիրովականի ավտոգենային մեքենաշինության գործարանը, որտեղ

---

4 «Народное хозяйство Армянской ССР за 60 лет. Юбилейный статистический ежегодник», Ереван, 1980, с. 46.

5 «Коммунист», 28. IX. 1980.

6 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարին, Երևան, 1981, էջ 13։

պետական որականիշով արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր 78 %, «Հայէլեկտրաապարատ» (70 %), «Հայէլեկտրաշարժիչ» (66 %), «Հայ էլեկտրալույս» (61 %), կարի «Գարուն» (69 %), կոշիկի «Մասիս» (30 %) արտադրական միավորումները և այլն[7]։

Քննվող ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում լայն տարածում ստացավ Դոնի-Ռոստովի և նրա մարզի բանվորների առաջ քաշած «Աշխատել առանց ետ մնացողների» և «Ոչ մի ետ մնացող կողքիդ» շարժումները։ Վերջիններս նպաստեցին աշխատավորների մասնագիտական վարպետության բարձրացմանը, արտադրական և տեխնիկական կարգապահության խստագույն պահպանմանը, որն իր հերթին հանգեցրեց հասարակական արտադրության արդյունավետության համակողմանի բարձրացմանը։

Մեր հանրապետությունում «Ոչ մի ետ մնացող կողքիդ» շարժման առաջին արձագանքողներից էր Երևանի «Ստանկոնորմալ» գործարանի կոլեկտիվը։ Այս ձեռնարկությունում բանվորների և բրիգադների միջև եղած փոխօգնությունը վերածվեց արտադրամասերի ու կոլեկտիվների աշխատանքային համագործակցության։ Այսպես, գործարանի սառը իջեցման արտադրամասի բրիգադներից մեկը վերցրեց մեկ այլ՝ երիտասարդական բրիգադի շեֆությունը։ Երկու բրիգադները ընդհանուր պլանային առաջադրանքները համատեղ կատարեցին այնքան ժամանակ, մինչև երիտասարդ կարգավորողները կարողացան դառնալ արտադրության առաջավորներ։ Նմանօրինակ ընդհանուր պլաններով էին աշխատում նաև արտադրամասի մյուս բրիգադները։ «Ոչ մի ետ մնացող կողքիդ» շարժումը այս ձեռնարկությունում լայն տարածում ստացավ և անընդհատ կատարելագործվում էր, որի հետևանքով գործարանի բանվորների մեծ մասը գերակատարում էր իր հերթափոխային առաջադրանքները[8]։

Սոցիալիստական մրցության արդյունավետ կիրառման և կշռադատված իրականացման օրինակ է «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման կոլեկտիվի գործունեությունը։ 10-րդ հնգամյակում ձեռք բերած հաջողությունների համար միավորման կոլեկտիվը ճանաչվեց համամիութենական սոցիալիստական մրցության հաղթող և արժանացավ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀամԿՄ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին։ 11-րդ հնգամյակի տարիներին ևս այս ձեռնարկությունում շարունակում է լայնորեն զարգանալ սոցիալիստական մրցությունը։ 1984 թ. «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման կոլեկտիվը հանդես եկավ մի նոր՝ ժողովրդական լայն սպառման բարձրորակ ապրանքների արտադրության ավելացման նախաձեռնությամբ։ Լամպագործները պարտավորվեցին բաձրորակ ապրանքների արտադրանքը հասցնել 82 %-ի, «Ն» (նորույթ) ինդեքսով կենցաղային լուսատեխնիկական ապրանքների արտադրությունը 1984 թ. հասցնել մինչև 13,5 մլն, իսկ 1985 թ.՝ 14,5 մլն ռուբլու, 11-րդ հնգամյակի տարիներին լայն սպառման ապրանքների արտադրությունը նախատեսված պլանային 75 մլն ռուբլու փոխարեն հասցնել 79,5 մլն ռուբլու[9]։ Լամպագործների նախաձեռնությունը լայն տարածում ստացավ հանրապետությունում։ Ժողովրդական լայն սպառման բարձրորակ ապրանքների արտադրության ավելացման սոցիալիստական նոր պարտավորություններ վերցրին Քանաքեռի ալյումինի գործարանի, կոշիկի «Նաիրի» արտադրական միավորման և այլ ձեռնարկությունների կոլեկտիվներ։

Սոցիալիստական մրցության որակական նոր փոփոխություններն արտացոլվեցին ձեռնարկությունների հանդիսակաց պլաններում, որի համար շարժումը Իվանովոյի տեքստիլագործների նախաձեռնությամբ մեր երկրում սկսվեց 9-րդ հնգամյակի նախօրեին։ Հանդիպակաց պլանների ունեցած նշանակությունն այն էր, որ դրանք մասսաների էնտուզիազմն օրգանապես միավո-

---

7 Նույն տեղում։

8 «Коммунист», 28. IV. 1977.

9 Նույն տեղում, 25. IV. 1984։

րում են սոցիալիստական տնտեսվարության պլանային համակարգի հետ։ Ամենակատարելագործված պետական պլանավորումն անգամ ի վիճակի չէ հաշվի առնել յուրաքանչյուր արտադրողի անհատական հնարավորությունները կամ էլ առանձին աշխատավորական կոլեկտիվների առանձնահատկությունները։ Ելնելով իրենց հնարավորություններից, աշխատավորները ստանձնում են ավելի բարձր պարտավորություններ։ Արդի ժամանակաշրջանում ոչ միայն հանդիպակաց պլանների անհրաժեշտություն է առաջացել, այլև հնարավորություններ են ստեղծվել դրանց որակական վերամշակման համար։ Հանդիպակաց պլանների համար շարժումը նոր որակ ստացավ ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. դեկտեմբերյան պլենումից հետո, որը կուսակցական, հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների առջև կոնկրետ խնդիր դրեց՝ աշխատանքի արտապլսնային արտադրողականությունը բարձրացնել 1 %-ով և արտադրանքի ինքնարժեքը լրացուցիչ իջեցնել 0,5%-ով[10]։ Արմատական բեկում կատարվեց նաև բուն հարցադրման մեջ։ Եթե մինչ այդ կոլեկտիվները հանդիպակաց պլանները պետք է հաստատեին իրենց գերատեսչություններում, որ կապված էր հումքի լրացուցիչ քանակի հայթհայթման հետ, ապա ՍՄԿԿ Կենտկոմի դեկտեմբերյան պլենումում նշվեց՝ շեշտը դնել զարգացման ոչ թե էքստենսիվ, այլ ինտենսիվ գործոնի վրա։ Դա փոխեց հանդիպակաց պլանների բնույթը։ Առաջնային դարձավ ոչ թե արտադրության ընդարձակումը, այլ տնտեսվարելու կարողությունը և եղած հնարավորությունների հմուտ օգտագործումը։ Այս խնդիրները իրագործվում են երկու ուղղությամբ՝ բարձր սոցիալիստական պարտավորությունների ստանձնմամբ և հանդիպակաց պլաններով։ Վերջիններս արտադրանքի աճի, աշխատանքի արտադրողականության բարձրացման և որակի բարելավման կարևորագույն ներքին ռեզերվ են։

Ձեռնամուխ լինելով կուսակցության որոշումների իրագործմանը, մեր հանրապետության աշխատավորական կոլեկտիվների մեծ մասը սոցիալիստական նոր պարտավորություններ ստանձնեց։ Այս առումով հատկանշական է Կ. Ցետկինի անվան կարի և կոշիկի «Մասիս» արտադրական միավորումների օրինակը։ Նշված կոլեկտիվներից առաջինը 1983 թ. ապրանքային արտադրության պլանը կատարեց 106,8%-ով և նախատեսված 800 հազար ռուբլու փոխարեն տվեց 4 մլն ռուբլու լրացուցիչ արտադրանք, որի համար արժանացավ ՀԿԿ Կենտկոմի, Հանրապետության Մինիստրների խորհրդի, Համխ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին[11]։ Շարունակելով լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունն, այս միավորման կոլեկտիվը ժամկետից ութ ամիս շուտ զեկուցեց 11-րդ հնգամյակի պլանային առաջադրանքները կատարելու մասին։ Նշված ժամանակահատվածում թողարկվել էր 311,3 մլն ռուբլու արտադրանք, իսկ աշխատանքի արտադրողականությունը բարձրացել էր 26,9 %-ով։ Զբաղարարվելով ձեռք բերվածով՝ Կ. Ցետկինի անվան արտադրական միավորման կոլեկտիվը պարտավորություն վերցրեց ի պատիվ ՍՄԿԿ XXVII և ՀԿԿ XXVIII համագումարների, հնգամյա պլանից ավել տալ 57 մլն ռուբլու արտադրանք[12]։ Կոշիկի «Մասիս» արտադրական միավորման կոլեկտիվը ժամկետից 6 ամիս շուտ կատարեց համախառն արտադրանքի թողարկման 11-րդ հնգամյա պլանը, տալով 586 մլն 670 հազար ռուբլու արտադրանք[13]։

ՍՄԿԿ Կենտկոմում ստախանովյան շարժման վետերանների, արտադրության առաջավորների և նորարարների հետ հանդիպման ժամանակ Մ. Ս. Գորբաչովը նշեց, որ «հարկավոր է սովորել տնտեսաբար օգտագործել յուրաքանչյուր տոննա մետաղը, նավթը, պարարտանյութը, յուրաքանչյուր կիլովատ էլեկտրաէներգիան, յուրաքանչյուր խորանարդ մետր անտառափայտը։ Ահա թե ինչու մրցությունն պետք է ընթանա աշխատանքային, նյութական ու ֆինան-

---

10 «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը, 26—27 դեկտեմբերի, 1983 թ.», Երևան, 1984, էջ 8։

11 «Коммунист», 18. VII. 1984.

12 «Սովետական Հայաստան», 31. V. 1985։

13 Նույն տեղում, 29. V. 1985։

սական ռեսուրսների նաև տնտեսման, ռացիոնալ օգտագործման համար... տընտեսումը, խնայողությունը, կուտակված արտադրական պոտենցիալի ռացիոնալ օգտագործումը մեր մերձավորագույն ռեզերվն են, ժողովրդական տնտեսության արդյունավետության բարձրացման վճռական պայմանը»[14]։ Ոչ միայն մեր հանրապետությունում, այլև ամբողջ Միությունում լայն տարածում ստացավ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում ծնունդ առած «Տարեկան 5 օր աշխատել խնայված նյութական-աշխատանքային և վառելիքա-էներգետիկ ռեսուրսների հաշվին» շարժումը[15]։ Վերջինս մեծ թափ ստացավ նաև «Մասիս» արտադրական միավորումում։ 11-րդ հնգամյակի տարիներին այստեղ վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողությունը հասավ 3 մլն ռուբլու։ Հընգամյակի սկզբից տնտեսվել է 25 մլն քառակուսի դեցիմետր փափուկ և 2 մլն քառակուսի դեցիմետր կոշտ կաշի։ Միավորման կոլեկտիվը 10 օր աշխատել է խնայված այդ նյութերի հաշվին և թողարկել 600 հազար ռուբլու արտադրանք։ Մասիսցիները ինը անգամ համամիութենական սոցիալիստական մրցության հաղթող են ճանաչվել և արժանացել ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀամԿԽ-ի ու ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշներին[16]։

1984 թ. ՀՍՍՀ-ի արտադրական ձեռնարկություններում լայն արձագանք ստացավ մոսկվացիների հայրենասիրական նախաձեռնությունը՝ մրցություն ծավալել «Մեծ հաղթանակի 40-ամյակին՝ 40 հարվածային աշխատանքային շաբաթ» նշանաբանով։ Դրա մեջ ընդգրկվեց հանրապետության աշխատավորական կոլեկտիվների մեծ մասը, որոնցից է նաև «Պոլիվինիլացետատ» արտադրական միավորման կոլեկտիվը։ Վերջինս վերանայեց 1984 թ. ընդունած սոցիալիստական պարտավորությունները և որոշեց 400 հազար ռուբլու լրացուցիչ արտադրանք թողարկել, իսկ աշխատանքի արտադրողականությունը լրացուցիչ բարձրացնել 0,5 %-ով[17]։ Միավորման աշխատավորները որոշեցին իրենց հարվածային շաբաթները նվիրել Հայրենական մեծ պատերազմում զոհված գործընկերների հիշատակին։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում սոցիալիստական մրցության տարածված ձևերից է միութենական տարբեր հանրապետությունների ձեռնարկությունների և միավորումների կոլեկտիվների միջև ծավալվող մրցակցություն-համագործակցությունը։ Վերջինս նպաստում է ինչպես միութենական հանրապետությունների արտադրական և տնտեսական կոոպերացմանը, այնպես էլ ՍՍՀՄ ժողովուրդների հետագա մերձեցմանն ու ինտերնացիոնալ համախմբմանը։ Հայաստանի բազմաթիվ արտադրական կոլեկտիվներ արդեն տասնյակ տարիներ մրցում են եղբայրական հանրապետությունների համանըման կոլեկտիվների հետ։ Երևանի, Լենինականի և Կիրովականի արտադրական շատ ձեռնարկություններ մրցության մեջ են Մոսկվայի, Քիշինևի, Վիլնյուսի, Ռիգայի, Օմսկի, Օդեսայի, Բաթումի, Ռուսթավիի, Կրասնոդարի, Սուխումի, Կիրովաբադի, Սումգայիթի և այլ քաղաքների արտադրական կոլեկտիվների հետ։ Երկար տարիներ միմյանց հետ մրցում են Կիրովականի քիմիական գործարանի և Ռուսթավիի մետալուրգիական կոմբինատի աշխատավորները, Երևանի, Վիլնյուսի և Օդեսայի մեքենաշինարարները, Լենինականի և Կիրովաբադի տեքստիլագործները։ Աշխատավորական այս կոլեկտիվները փորձի փոխանակման ընթացքում համակողմանիորեն ծանոթանում են արտադրական նորույթներին, միմյանց կոնկրետ օգնություն են ցույց տալիս առաջավոր տեխնիկայի ներդրման և բարձրորակ արտադրանքի ավելացման ուղղությամբ։ Աշխատանքային կոլեկտիվների միջև ծավալվող մրցությունը վաղուց վեր է ածվել քաղաքների և շրջանների մրցության։ Այսպես, Երևանի Լենինյան ու 26 կոմիսար-

---

14 Նույն տեղում, 21. IX. 1985։

15 «Коммунист», 18. VII. 1985.

16 «Սովետական Հայաստան», 29. V. 1985։

17 «Коммунист», 5. VIII. 1984.

ների անվան շրջանների աշխատավորները մրցում են Դոնի-Ռոստովի՝ Պրոլետարական, Կիևի՝Դարնիցկի և Ժովտնևի, Թբիլիսիի ու Բաքվի Լենինյան և 26 կոմիսարների անվան շրջանների աշխատավորների հետ։ Ավելի քան քսան տարի է ինչ միմյանց հետ մրցում են Հայաստանի Թումանյանի և Վրաստանի Ձեստոֆոնի շրջանները։ Վաղուց ավանդույթ է դարձել մրցությունը մեր հանրապետության Սպիտակի և Ստավրոպոլի երկրամասի Կուրգանի, Մեդրու և Ադրբեջանի Օրդուբադի շրջանների աշխատավորների միջև։ Այս շրջաններում ամեն տարի ի մի են բերվում մրցության արդյունքները և առաջավոր կոլտնտեսություններն ու սովխոզները պարգևատրվում են փոխանցիկ կարմիր դրոշներով։

Քննվող ժամանակաշրջանում սոցիալիստական մրցության հետագա կատարելագործման կարևորագույն նախապայմանը բուռն զարգացող գիտատեխնիկական հեղափոխությունն է, որի ակնառու դրսևորումներից է նորարարների և գյուտարարների շարժումը։ Վերջինս ինչպես ամբողջ Միությունում, այնպես էլ ՀՍՍՀ-ում սկսվեց 1950-ական թվականների վերջերին և աստիճանաբար մասսայական բնույթ ստացավ։ Եթե 1960 թ. հանրապետությունում նորարարական և գյուտարարական առաջարկություններով հանդես եկան 8,9 հազար մարդ, 1970 թ.՝ 15,2 հազար, ապա 1983 թ.՝ 24,0 հազար մարդ[18]։ Ինչպես տեսնում ենք, նշված ժամանակահատվածում զգալիորեն աճել է նորարարների և գյուտարարների թվաքանակը։ Նրանցից շատերը ստանձնում էին անհատական սոցիալիստական պարտավորություններ։ 1980-ական թվականների սկզբներին «Անդրկովկասկաբել» արտադրական միավորման Երևանի կաբելի գործարանի գյուտարարները և նորարարները հանրապետության աշխատավորներին կոչ արեցին աշխատել «Նյութական ռեսուրսների խնայման պետական պլանների 50 %-ը կատարել նորարարական առաջարկությունների ներդրման հաշվին»[19]։ Այն նպաստեց նորարարական և գյուտարարական շարժման հետագա ընդլայնմանը, որի հետևանքով արդեն 1984 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ ավելի քան 20 հազար գյուտարարական և նորարարական առաջարկությունների ներդրումից ստացված շահույթը կազմեց 72 մլն ռուբլի, տնտեսվեցին 9 հազար տոննա սև, 631 տոննա գունավոր մետաղ, 86 մլն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա և նյութական այլ ռեսուրսներ[20]։ Ռացիոնալիզատորների և գյուտարարների ստեղծագործությունն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում ՍՄԿԿ Կենտկոմի (1985 թ.) ապրիլյան պլենումի որոշումների լույսի ներքո, որտեղ գիտատեխնիկական առաջադիմության արագացումը համարվեց ժողովրդական տնտեսության ինտենսիվացման ստրատեգիական լծակը։

Այսպիսով, զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում ՀՍՍՀ-ում սոցիալիստական մրցությունն անընդհատ կատարելագործվում և ստանում է նոր ձևեր։ Հանրապետության աշխատավորները հանդես են գալիս հայրենասիրական զանազան նախաձեռնություններով, որոնք առաջին հերթին նպատակաուղղված են աշխատանքի արտադրողականության և արտադրանքի որակի բարձրացմանը։ Այս ամենը հնարավորություն է տալիս հանրապետության աշխատավորներին հաջողությամբ կատարել 11-րդ հնգամյակի պլանային առաջադրանքները։ Եվ պատահական չէ, որ Սովետական Հայաստանը տասը տարի անընդմեջ համամիութենական սոցիալիստական մրցության հաղթող է ճանաչվել և արժանացել ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀամԿԿ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին։ Այս հաջողությունները վկայում են, որ մեր հանրապետության աշխատավորները արժանավայել կդիմավորեն նաև ՍՄԿԿ XXVII համագումարը։

---

18 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году». Статистический ежегодник, Ереван, 1978,с. 35; «Народное хозяйство Армянской ССР в 1983 году». Статистический ежегодник, Ереван, 1984, с. 40.

19 «Коммунист», 30. VI. 1984.

20 «Սովետական Հայաստան», 18. VI. 1985։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ В ПРОМЫШЛЕННОСТИ АРМ. ССР В ПЕРИОД РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

РУБЕН АЗИЗБЕКЯН

Резюме

В условиях развитого социализма в Армянской ССР широко развивается социалистическое соревнование, которое постоянно совершенствуется и обогащается новыми формами. Трудящиеся республики выступают с патриотическими починами, направленными на повышение производительности труда и улучшение качества продукции.

Одной из распространенных форм социалистического соревнования на современном этапе является соревнование-сотрудничество между коллективами предприятий и объединений, а также между районами и городами союзных республик. В Армянской ССР имеется много коллективов и районов, которые уже десятилетиями соревнуются с родственными коллективами и районами других братских республик.

В исследуемый период важной предпосылкой дальнейшего развития социалистического соревнования выступает бурно развивающаяся научно-техническая революция, охватившая все стороны трудовой деятельности соревнующихся, которые, в свою очередь, являются непосредственными творцами науки и техники. Исходя из этого, одним из важнейших проявлений социалистического соревнования является движение новаторов. Последнее, как в стране в целом, так и в Армянской ССР развернулось с конца 50-х годов и в дальнейшем приобрело массовый характер.